Հոկտեմբերի 11, 2021 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Արցախի Հանրապետությունում 2021 թ. հոկտեմբերի 10-ի տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների վերաբերյալ

2021 թվականի հոկտեմբերի 10-ին Արցախի Հանրապետության 4 համայնքներում՝ Ասկերանի շրջանի Խաչմաչ և Ծաղկաշատ, Մարտակերտի շրջանի Նոր Ղազանչի և Մարտունու շրջանի Հերհեր գյուղերում անցկացվել են տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) ընտրություններ: Ընտրական գործընթացները հսկվել են «Ականատես» դիտորդական առաքելության կողմից երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդության միջոցով:

Դիտորդական առաքելության մասին

«Ականատես» դիտորդական առաքելությունը հիմնադրվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության, «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» (ԺԱԱ) հասարակական կազմակերպության, «Ռեստարտ» գիտակրթական հիմնադրամի և Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի կողմից: Արցախի Հանրապետությունում դիտորդական առաքելության գործընկերը «Քաղաքացիական հաբ» հասարակական կազմակերպությունն է:

«Ականատես»-ի նպատակն է նպաստել Հայաստանում և Արցախում ազատ և արդար ընտրությունների անցկացմանը և դրանց նկատմամբ հանրային անկողմնակալ հսկողությանը, ընտրական գործընթացների օրինավորությանը:

«Ականատես»-ը գործում է անկախ՝ պահպանելով անկողմնակալության սկզբունքը և զերծ մնալով այնպիսի գործողություն կատարելուց, որը կարող է մեկնաբանվել որպես աջակցություն, քարոզչություն կամ հակաքարոզչություն ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության (դաշինքի), թեկնածուի օգտին կամ դեմ:

Դիտարկման մեթոդաբանություն

Երկարաժամկետ դիտորդությունը մեկնարկել է 2021 թ. սեպտեմբերի 26-ին՝ ներգրավելով երկարաժամկետ 4 դիտորդ՝ ԱՀ Ասկերանի շրջանի Խաչմաչ և Ծաղկաշատ, Մարտակերտի շրջանի Նոր Ղազանչի և Մարտունու շրջանի Հերհեր համայնքներում դիտարկելու և գնահատելու նախընտրական և քվեարկության օրվա գործընթացները:

Նախընտրական ժամանակահատվածում դիտարկման առարկա են հանդիսացել ընտրությունների վարչարարությունը, այդ թվում՝ Տարածքային ընտրական հանձնաժողովների գործունեությունը, գործողությունների համապատասխանությունը ժամանակացույցին, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների

գործունեությունը, նախընտրական քարոզչությունը, վարչական ռեսուրսի օգտագործումը, բողոքների քննությունը և այլն:

Տվյալների հավաքագրումը կատարվել է գրասենյակային հետազոտության, առցանց բաց տվյալների վերլուծության, անմիջական դիտարկումների, հանդիպումների, հարցազրույցների, ինչպես նաև՝ մամուլի լուսաբանումներին հետևելու միջոցով: Տեղերում դիտորդները հանդիպել են տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների, թեկնածուների, տեղական ինքնակառավարման մարմինների, լրատվամիջոցների, ինչպես նաև ընտրական գործընթացի այլ մասնակիցների հետ: Տեղեկատվության ճշգրտությունն ու հավաստիությունն ապահովելու նպատակով ստացված տվյալները հնարավորինս ստուգվել են մի քանի անկախ աղբյուրների միջոցով:

Ընտրությունների մասին

ԱՀ կառավարության՝ 2021 թ. օգոստոսի 12-ի թիվ 900-Ն որոշմամբ 2021 թ. հոկտեմբերի 10-ին նշանակվել են՝

- Ասկերանի շրջանի Խաչմաչ համայնքում՝ համայնքի ղեկավարի ընտրություններ,
- Ասկերանի շրջանի Ծաղկաշատ համայնքում՝ համայնքի ղեկավարի և ավագանու ընտրություններ,
- Մարտակերտի շրջանի Նոր Ղազանչի համայնքում՝ համայնքի ղեկավարի ընտրություններ,
- Մարտունու շրջանի Հերհեր համայնքում՝ համայնքի ղեկավարի ընտրություններ:

Նույն թվականի օգոստոսի 19-ին ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընդունել է ԱՀ ՏԻՄ-երի ընտրությունների նախապատրաստման և անցկացման մասին N 5-Ա որոշումը[1]՝ հաստատելով նաև ընտրությունների նախապատրաստման և անկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը[2]:

Ըստ ԱՀ ոստիկանության տրամադրած տվյալների 2021 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ընտրողների թիվը կազմում էր.

- 143 ընտրող Խաչմաչ համայնքում (Ասկերան),
- 102 ընտրող Ծաղկաշատ համայնքում (Ասկերան),
- 98 ընտրող Նոր Ղազանչի համայնքում (Մարտակերտ)
- 399 ընտրող Հերհեր համայնքում (Մարտունի) [3]:

Ընտրություններին գրանցվել է համայնքի ղեկավարի թվով 6, իսկ ավագանու անդամի՝ թվով 5 թեկնածու (բոլորն ինքնաառաջադրմամբ), որոնցից.

- Խաչմաչ համայնքում համայնքի ղեկավարի 2 թեկնածու (2-ն էլ «Ազատ հայրենիք» կուսակցությունից),
- Ծաղկաշատ համայնքում համայնքի ղեկավարի 2 և համայնքի ավագանու 5 անկուսակցական թեկնածու,
- Նոր Ղազանչիում համայնքի ղեկավարի 1 թեկնածու «Ազատ հայրենիք» կուսակցությունից,
- Հերհեր համայնքում համայնքի ղեկավարի 1 անկուսակցական թեկնածու:

[1] http://cecnkr.am/wp-content/uploads/2014/12/5-%D4%B1-%D5%88%D6%80%D5%B8%D5%B7%D5%B8%D6%82%D5%B41.pdf
[2] http://cecnkr.am/wp-content/uploads/2021/08/jamanakacuyc.pdf
[3] http://cecnkr.am/wp-content/uploads/2021/08/123.pdf

Հիմնական բացահայտումներ

Համաձայն դիտորդների տրամադրած տվյալների ընտրությունների նախընտրական հատվածն ընթացել է հանդարտ առանց էական խոչընդոտների և խախտումների:

Ընտրությունների վարչարարություն

Տարածքային ընտրական հանձնաժողովները հիմնականում հետևել են Ընտրական օրենսգրքով սահմանված ընթացակարգերին, ինչպես նաև՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման միջոցառումների ժամանակացույցին: Տարածքային ընտրական հանձնաժողովները նախընտրական շրջանում խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ չեն ստացել: Դիտորդների կողմից տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքներում որևէ խնդիրներ չեն արձանագրվել, իսկ հանձնաժողովների վերաբերմունքը դիտորդների նկատմամբ գնահատվել է համագործակցային:

Նախընտրական քարոզչություն

ԱՀ ընտրական օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ նախընտրական քարոզչությունը մեկնարկում է 2021 թ. սեպտեմբերի 16-ին և ընթանում է մինչև հոկտեմբերի 8-ը՝ ժամը 24:00-ն[4]:

Ըստ երկարաժամկետ դիտորդների՝ նախընտրական քարոզչությունը եղել է պասիվ՝ պայմանավորված հիմնականում՝

- համայնքներում ընտրողների ցածր քանակով,
- հետպատերազմյան շրջանում ընտրողների հուսալքվածությամբ և անվտանգային ռիսկերի ֆոնին՝ ընտրական գործընթացների նկատմամբ թերահավատությամբ,
- համայնքապետարաններում համայնքի զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսների/բյուջեի և բավարար լիազորությունների բացակայությամբ և դրանով պայմանավորված, ընտրությունների արդյունքներից անկախ, ՏԻՄ-երի կառավարումից՝ նվազ ակնկալիքներով,
- համայնքներից 2-ում՝ Հերհերում և Նոր Ղազանչիում մրցակցության բացակայությամբ, քանի որ այդտեղ ընտրություններին մասնակցել է համայնքի ղեկավարի մեկական թեկնածու:

Նախընտրական քարոզչանյութերի տարածման կանոններում խախտումներ չեն արձանագրվել: Համայնքի ղեկավարները, ըստ սահմանված կարգի, համայնքի տարածքում առանձնացրել են անվճար տեղեր քարոզչական պաստառներ փակցնելու համար: Այնուամենայնիվ, անգամ մեկից ավելի թեկնածու ունեցող համայնքներում քարոզչությունը եղել է պասիվ: Թեկնածուների կողմից քարոզչական պաստառներ չեն տպագրվել: Թեկնածուները դիտորդների հետ հանդիպումների ընթացքում նշել են, որ չունեն նախընտրական ծրագրեր, իսկ ոմանք ասել են, որ ծրագրերը ներկայացնում են բանավոր՝ համայնքների բնակիչների հետ հանդիպումների ընթացքում:

Նախընտրական քարոզչության ֆինանսավորման նպատակով թեկնածուներից ոչ մեկը նախընտրական հիմնադրամ չի ձևավորել, որը նաև ԱՀ ընտրական օրենսգրքով պարտադիր պահանջ չէ[5]:[5]

Քվեարկության օրը

[4] ԱՀ ընտրական օրենսգիրք, հոդված 19, մաս 1
[5] ԱՀ ընտրական օրենսգիրք, հոդված 26, մաս 1, հոդված 133, մաս 1

«Ականատես» առաքելության դիտարկման արդյունքներով, Արցախի Հանրապետությունում 2021 թ. հոկտեմբերի 10-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն, ընդհանուր առմամբ, ընթացել են խաղաղ մթնոլորտում և քաղաքացիները հնարավորություն են ունեցել իրացնել իրենց ընտրական իրավունքը:

Քվեարկության օրվա գործընթացը դիտարկելու նպատակով ներգրավվել է 4 միջազգային («Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ կողմից) և 4 տեղական («Քաղաքացիական հաբ» ՀԿ կողմից) դիտորդ, ինչպես նաև շրջիկ դիտորդական խումբ՝ տեղամասերի շրջակայքում և համայնքում ընդհանուր միջավայրը դիտարկելու նպատակով: Դիտորդներին իրավական և կազմակերպական աջակցություն տրամադրելու նպատակով ձևավորվել է համակարգող կենտրոն՝ բաղկացած իրավաբաններից և համակարգողներից:

Նախապատրաստման փուլ

Քվեարկության օրը՝ առավոտյան ժամը 07:00-08:00 ընկած ժամանակահատվածում տեղամասերի նախապատրաստումն անցել է խաղաղ պայմաններում:

Տեղամասերից որևէ մեկում չի խոչընդոտվել դիտորդների մուտքը:

Երկու համայնքում դիտարկվել են կահավորման հետ կապված խնդիրներ: Մասնավորապես, Ծաղկաշատ համայնքի թիվ 2/2 ընտրատեղամասում քվեախցիկները տեղադրված են եղել համարյա սենյակի կենտրոնում, ինչի արդյունքում ծագել են ռիսկեր քվեարկության գաղտնիության ապահովման տեսանկյունից: Դիտորդների կողմից բարձրաձայնվելուց հետո խնդիրը լուծվել է քվեախցիկները տեղափոխելու միջոցով:

Նոր Ղազանչի համայնքի թիվ 4/1 ընտրատեղամասում քվեարկության գաղտնիությունը չապահովող կահավորման հետ կապված խնդիրը նկատվել է ԿԸՀ կողմից դեռևս նախօրեին, սակայն տեղափոխությունները կատարվել են միայն քվեարկության օրը՝ առավոտյան:

Ծաղկաշատ համայնքի թիվ 2/2 ընտրատեղամասային հանձնաժողովի անդամները լիարժեք չեն տիրապետել ընտրական գործընթացներին: Մասնավորապես, տեղամասային ընտրական հանձնաժողովը նախատեսում էր կազմակերպել պարտականությունների բաշխման միայն մեկ վիճակահանություն, սակայն դիտորդների հորդորից հետո իրականացվել է 6 վիճակահանություն՝ օրենքով սահմանված կարգով:

Հարկ է արձանագրել, որ ընտրական հանձնաժողովների աշխատանքային դերաբաշխման նպատակով վիճակահանության անցկացման կարգի խախտումը բազմակի անգամ դիտարկվել է նաև նախկինում և հիմնականում պայմանավորված է եղել Արցախի Հանրապետության ընտրական օրենսդրության բացերով և հակասություններով:

Խաչմաչ համայնքի թիվ 2/1 ընտրատեղամասում եղել է թեքահարթակ, սակայն դրան հասնելու ճանապարհին մոտ 10 մետր հատվածը քանդված էր, կատարվում էին շինարարական աշխատանքներ, իսկ ընտրատեղամասում գրանցամատյանների սեղանը, քվեախցիկները, և քվեատուփը գտնվում էին դահլիճի բեմում, որին հասնելու համար հարկավոր է իջնել և հետո բարձրանալ մի քանի աստիճան:

Բոլոր տեղամասերում քվեարկությունը մեկնարկել է ժամանակին՝ ժամը 08:00-ին:

Քվեարկության ընթացք

Քվեարկությունն ընթացել է խաղաղ մթնոլորտում, իսկ խախտումները հիմնականում կրել են տեխնիկական և ոչ միտումնավոր բնույթ:

Դիտորդների իրավունքները քվեարկության գործընթացը դիտարկելու ընթացքում չեն խոչընդոտվել:

Տեղամասերից 2-ում դիտարկվել է ընտրողների նախաձեռնությամբ բաց քվեարկության դեպքեր: Ծաղկաշատ համայնքի թիվ 2/2 ընտրատեղամասում մեկ հոգի բաց է քվեարկել և հրապարակային հայտարարել է իր քվեարկության մասին: Հերհեր համայնքի թիվ 5/1 ընտրատեղամասում քվեաթերթիկները հաճախ միայն մեկ անգամ են ծալվել ընտրողների կողմից, ինչի արդյունքում դրանք քվեատուփում ինքնաբերաբար բացվել են՝ բացահայտելով քվեարկության արդյունքները:

Տեղամասերում քվեարկությանը մասնակցող ընտրողները 2-4 դեպքերում օգտվել են ընտրողների օգնությունից, ինչը պատշաճ կարգով գրանցվել է գրանցամատյանում:

Երկու ընտրատեղամասում նկատվել է կողմնակի անձանց ներկայություն: Նոր Ղազանչի համայնքի թիվ 4/1 ընտրատեղամասում նկատվել է մի քանի դեպք, երբ ընտրատեղամաս են մտել կողմնակի անձինք, այդ թվում՝ համայնքապետի թեկնածուն՝ քվեարկելուց հետո, սակայն նրանք բավականին արագ դուրս են հրավիրվել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից: Հերհեր համայնքի թիվ 5/1 ընտրատեղամասում, որը գտնվում էր դպրոցի շենքում, օրվա ընթացքում բազմիցս ելումուտ են արել դպրոցի աշխատակիցները:

Հերհեր համայնքում ժամկետանց անձնագրերով երեք հոգու չեն թողել մասնակցել քվեարկության, չնայած որ դա չի արգելվում ԱՀ ընտրական օրենսգրքով:

Քվեարկությունը բոլոր տեղամասերում ավարտվել է և դրանք փակվել են ժամանակին՝ 20:00-ին:

Արդյունքների ամփոփում

Քվեարկության և տեղամասերի փակման գործընթացներն անցել են խաղաղ: Քվեարկության ամփոփման ժամանակ առանձին դեպքեր չեն գրանցվել:

Ընդհանուր դիտարկում

«Ականատես» դիտորդական առաքելությունն արձանագրում է, որ դիտորդական առաքելության կազմակերպումն ու ընթացքը եղել են սահուն, առանց խոչընդոտների: Դիտորդներն արժանացել են բարյացակամ վերաբերմունքի ինչպես ընտրական հանձնաժողովների, այնպես էլ՝ այլ դերակատարների կողմից:

Ընտրական գործընթացները հիմնականում համապատասխանել են ԱՀ ընտրական օրենսգրքի նորմերին և միջազգային ստանդարտներին: Դիտարկված մի քանի աննշան խախտումները հիմնականում պայմանավորված են եղել տեղամասային հանձնաժողովների անդամների՝ ընտրական օրենսդրությանը ոչ լիարժեք տիրապետմամբ: